



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-2-Ո-1
2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

նախագահությամբ՝ Ա. Ավագյանի
մասնակցությամբ ԱԽ անդամներ՝ Լ. Ասրյանի, Մ. Ավանեսյանի, Ս. Արզումանյանի,
Գ. Գրիգորյանի, Հ. Խաչատրյանի, Կ. Մարդանյանի,
Կ. Սաղյանի, Մ. Սաֆարյանի, Ա. Լազարյանի,
քարտուղարությամբ՝ Գ. Հովհաննիսյանի

2013 թվականի հունվարի 18-ին Ստեփանակերտ քաղաքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նստավայրում, դռնփակ նիստում, քննության առավ Վիտալի Ադվերիկի Հայրապետյանին և Ռաֆայել Կարենի Ջհանգիրյանին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավորների պաշտոնում նշանակելու հիմքով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների թեկնածուների ցուցակից հանելու մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի միջնորդությունը և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների թեկնածուների ցուցակից Վիտալի Ադվերիկի Հայրապետյանին և Ռաֆայել Կարենի Ջհանգիրյանին հանելու առաջարկությանը:

2. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավորներ Վիտալի Ադվերիկի Հայրապետյանին և Ռաֆայել Կարենի Ջհանգիրյանին Լեոնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների թեկնածուների ցուցակից հանելու առաջարկով դիմել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին:

ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԱՎԱԳՅԱՆ